ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՌԻՅԱԴ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, Զբաղեցրած պաշտոնը.**

- Ժորա Սարգսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Սաուդյան Արաբիայի Թագավորություն (Ռիյադ), 2026 թվականի հունվարի 25-ից 27-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Համաշխարհային բանկ և Սաուդյան Արաբիայի մարդկային ռեսուրսների և սոցիալական զարգացման նախարարություն:

4. **Գործուղման նպատակը.**

2026 թվականի հունվարի 26-ին Ռիյադում (Սաուդյան Արաբիայի Թագավորություն) կազմակերպվող Աշխատաշուկայի ակադեմիա 2025 թ.-ի առաջին շրջանավարտների պաշտոնական ավարտական արարողությանը մասնակցելու և որպես շրջանավարտ ավարտական վկայականը ստանալու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Աշխատաշուկայի ակադեմիա 2025-ի շրջանակներում բոլոր բովանդակային հարցերը քննարկվել են 2025 թվականի հունվարին Ռիյադում (Սաուդյան Արաբիայի Թագավորություն) տեղի ունեցած համաժողովի և 2025 թվականի հոկտեմբերի 29-ից 31-ը Փարիզում տեղի ունեցած Աշխատաշուկայի գլոբալ 2-րդ համաժողովի շրջանակներում, որոնք միտված էին աշխատաշուկայի առավել բարդ մարտահրավերների և միջազգային փորձի խորքային ուսումնասիրությանը, աշխատաշուկայի վերջին միտումների խորքային ուսումնասիրությանը և այլն:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Սաուդյան Արաբիայի Թագավորությունում տեղի ունեցած Աշխատաշուկայի երրորդ գլոբալ համաժողովի (GLMC) շրջանակում մասնակցել եմ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի և Սերբիայի աշխատանքի, զբաղվածության և սոցիալական հարցերի, Լատվիայի սոցիալական ապահովության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության աշխատանքի նախարարների միջև տեղի ունեցած պաշտոնական հանդիպումներին, որոնց

շրջանակում քննարկվել են ոլորտային համագործակցության հնարավոր ուղղությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաշուկայի ակադեմիա 2025 թ.-ի առաջին շրջանավարտների պաշտոնական ավարտական արարողության արդյունքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

X _____

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

30. 01. 2026